«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 76 §16 03 05 2024թ.

ՀՀ. ք. Իջևան 4001 Ուսանողական 3

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 32-րդ կետի 22-րդ ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի թիվ 72/7 (16-ը մարտի 2024 թ.) որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի (նոր խմբագրությամբ) 16-րդ կետի պահանջները՝

հրամայում եմ.

1.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի (նոր խմբագրությամբ) 16-րդ կետի Աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշներին համապատասխան **100 միավորանոց** գնահատման **համակարգում** համամասնությունները սահմանել հետևյալ կերպ.

Գնահատման չափանիշներ	Միավոր
Ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները	**20*X**
ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում	**30**
Դասալսումների արդյունքներ	**30**
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	**20**

Որտեղ $X = a/b$. a-ն ուսումնական տարվա ընթացքում տվյալ դասախոսի վարած դասընթացները գնահատած ուսանողների թիվն է, b–ն՝ ուսումնական տարվա ընթացքում տվյալ դասախոսի վարած դասընթացներին մասնակցած ուսանողների թիվը:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել փոխտնօրենին, գիտական քարտուղարին, Ուսումնամեթոդական վարչությանը, ֆակուլտետների դեկաններին, ամբիոնների վարիչներին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**